տեղեկասջիք հանդամանաց գործոյն, զի խնդրեալ են լինել քննութեան ամբաստանեալ իրաց 'ի տեղւոջ իւրում. ուստի առաքեցէք 'ի կողմանէ ձերմէ զայր ոք հաւատարիմ և խոհեմ, քննել և ստուգել պարագայիւք զգործն, և իմանալ թէ ո՞րպիսի եղանակաւ լեալ իցէ հակառակութիւն հրովարտակին, զի կամիմ փոյթ մեծ ունել գործադրութեան նորին, Վ Շէվվալ ամսոյ, ١٢٥٣։

Պատճէն նամակի Գաւառապետին գրեալ առ Միւֆթի և առ Բաղաքապետն Երուսաղէմի։ Գրամատոյց մեծապատիւ Փոխանորդ և Թիկնապահ որդեակն մեր Հաֆըզ Ըէշիտ Էֆէնտի առաքեցաւ առ ձեզ՝ ընդ իւր ունելով զպատճէնս հրամանագրի Փոխարքային, Կայսերական հրովարտակին, և նամակի Հիւպատոսին մատուցեալ առ Փոխարքայն, և հրամայեալ է նորին Բարձրութիւնն քննել յԵրուսաղէմ զգաստս Հայոց և Ցունաց, որ ունի լինել 'ի ձեռն որդեկին մերոյ և Միւֆթի Էֆէնտեայ՝ առաջի Փոխանորդաց երկուց ազգաց, եւ զկնի աւարտելոյ քննութեանն՝ ըստ պահանջման օրինաց կնքել ամենեցուն զարձանագրութիւն և դարձուցանել այսր ընդ որդեկին մերոյ։ Ի վերջ Զիլգատէ ամսոյ՝ ١٢٥٣։

Կազմեցաւ ժողով յապարանս Բաղաքապետին, որոյ անդամք էին՝ Մէհէմմէտ Թահիր Էֆէնտի Միւֆթի քաղաքին, Մուստաֆա աղա Բաղաքապետ, Հաֆըզ Ըէշիտ Էֆէնտի՝ Թիկնապահ Գաւառապետին, Բիրիլլոս՝ Փոխանորդ՝ և Սոֆրոնիոս Թարգման 'ի Կողմանէ Ցունաց։ Կարապետ Եպիսկոպոս Փոխանորդ, և Իսահակ վարդապետ Թարգման 'ի կողմանէ Հայոց։

Նիստ Առաջին։

Նախ ընթերցան զնամականիս, զոր գրեցաք, և ապա եհարց Ըէշիտ Էֆէնտի ցՀայս, իմացաք զմիտս ընթերցեալ գրոց, և թէ ընկեցան երեքին հրովարտակք Հայոց, և ընդհանուր նորոգութիւնն տուաւ Ցունաց, որպէս գրեալ է 'ի հրովարտակին; ուրեմն զիա՞րդ համարձակեցայք չինել և նորոգել զծանուցեալ տեղիսն՝ ոչ հնազանդելով հրամանին, զպատճառս եւ զհանգամանս գործոց իւրաքանչիւր տեղւոյ պատմեցէք ճշդութեամբ։